

**ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ**

*Բանալի բառեր՝ Լեզվաբանություն, արաբական բարբառներ, Էմիրությունների բարբառներ, բարբառագիտություն, :*

Յուրաքանչյուր լեզվին բնորոշ է ունենալ լեզվի մի քանի տեսակներ՝ գրական, խոսակցական, տարածաշրջանային խոսվածքներ, բարբառներ: Արաբերենը, լինելով տարբեր աշխարհամասերում գտնվող արաբական 22 երկրների պաշտոնական լեզուն, առանձնանում է այլ լեզուներից իր բազմաթիվ բարբառներով և տեղական լեզուներով, ընդ որում յուրաքանչյուր երկրի ներսում այն ունի նաև ենթաբարբառներ:

Արաբական բազմաթիվ բարբառների դասակարգման համար առանձնացվում են մի քանի չափորոշիչներ, ինչպես օրինակ տարածքային, հնչյունաբանական, քաղաքային կամ բեդվինական և այլն: Սակայն, նույնիսկ այդ դասակարգումները ստույգ չեն այն առումով, որ միևնույն խմբի մեջ մտնող բարբառների միջև նույնպես կան էական տարբերություններ, որոնք ժամանակի ընթացքում միտում ունեն էլ ավելի խորանալու: Հաշվի առնելով արաբական բարբառների զարգացման տեմպերը և գրական լեզվից հեռանալու միտումը, կարելի է նշել, որ եթե չլինեի կրոնական գործոնը և գրական լեզուն պահպանելու ջանքերը, հնարավոր է, որ առանձնանային արաբական ծագում ունեցող մի շարք ինքնուրույն լեզուներ, ինչպես օրինակ, եգիպտերեն, թունիսերեն, լիբիերեն և այլն: Սակայն քանի դեռ կա միավորող հզոր կրոնական գործոնը, գրական լեզուն կշարունակի մնալ համաարաբական լեզու, թեկուզև ոչ բոլոր ոլորտներում<sup>2</sup>:

Խոսակցական քիչ թե շատ միասնական լեզուներն այժմ բաժանում են չորս հիմնական խմբերի՝

- մադրիքյան (Մարոկկո, Ալժիր, Թունիս և Լիբիայի արևմտյան հատվածները),
- եգիպտական (Լիբիայի արևելյան հատվածները, Եգիպտոսը և Սուդանը),
- սիրալիբանանյան (Սիրիա, Լիբանան, Հորդանան և Պաղեստին)
- Արաբական թերակղզու և Ծոցի երկրների (Իրաք, Սաուդյան Արաբիա, Եմեն, Օման, Կատար, Բահրեյն, Արաբական Միացյալ Էմիրություններ և Բուվեյթ)<sup>3</sup>:

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, արաբագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ hasmikyericyan@gmail.com

<sup>2</sup> د. إبراهيم أنيس، "في اللهجات العربية" القاهرة، 2003

<sup>3</sup> د. محمد شفيع الدين " اللهجات العربية وعلاقتها باللغة العربية الفصحى دراسة لغوية"، 2007

Այդ լեզվական միավորումների շրջանակում շարունակում են գործել բեդվինական, գյուղական և քաղաքային խոսվածքների տարբերությունները, սակայն, օրինակ, քաղաքային խոսվածքներն ունեն այսպես կոչված վերտարածաշրջանային ընդհանրություններ: Լեզվաբանական տարատեսակությունը խստորեն պայմանավորված է տվյալ հանրությունում առաջացած լեզվաբանական տարածությամբ, որը բխում է ժամանակային, տարածական և սոցիալական այն բաժանումներից, որոնք գոյություն ունեն տվյալ հանրությունում առաջացող լեզուները (բարբառները) կրող խոսողների միջև<sup>4</sup>:

Այսպիսով, Արաբական Միացյալ Էմիրությունների բարբառը դասակարգված է Ծոցի երկրների բարբառների շարքում՝ չնայած դրանց միջև եղած տարբերություններին: Անդրադառնալով ԱՄԷ-ում տարածված բարբառներին՝ հարկ է նշել, որ այստեղ նույնպես առանձնացվում են խոսակցական լեզվի տարատեսակներ, որոնց կարելի է անվանել բարբառներ կամ ենթաբարբառներ:

Աշխարհագրորեն ԱՄԷ-ն բաղկացած է առափնյա շրջաններից, լեռներից և անապատներից: Այս աշխարհագրական և բնակլիմայական պայմանների տարբերությունն էլ հավանաբար հանգեցրել է տեղի բնակիչների խոսվածքների առանձնացմանը: Դեռ վաղ ժամանակներից այստեղ բնակվել են արաբական ցեղախմբեր, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր ցեղի խոսվածքը: Այս տարածքներում հայտնի են եղել հատկապես ալ Ազդ, Աբդ ալ Կայս, Թամիմ և այլ հնագույն ցեղախմբեր<sup>5</sup>: Արաբական հնագույն ցեղախմբերի բարբառները մեծ դեր են խաղացել ժամանակակից արաբական բարբառների ձևավորման գործում: Վերջին տասնամյակներում նկատելի է, որ նոր սերունդը փոփոխության է ենթարկում իրենց տեղական բարբառները, Էմիրությունների արևելյան շրջաններում միտում կա օգտագործելու առափնյա բարբառը, մասնավորապես Շարժայի բարբառը, իսկ արևմտյան և անապատային շրջանների երիտասարդները առավել օգտագործում են Աբու Դաբիի բարբառը:

Էմիրությունների բարբառներում նկատելի են նաև այլ բարբառների ազդեցությունը, ինչպես եգիպտական բարբառի, Քուվեյթի բարբառի: Եգիպտական բարբառից տարածված է/ (مائل-كويس (جيد) , Քուվեյթի բարբառի ազդեցությունը հիմնականում ավելի մեծ է, այստեղ նույնպես հաճախ նկատելի է "քաշքաշա" երևույթը՝ իգական սեռի "քաֆ" հարֆը հնչյութափոխվում է "չ"-ի: Ինչպես և արաբական մյուս բարբառներում,

<sup>4</sup> Mansour Sayah, Racha Nagem, Henda Zaghouani "La langue arabe, histoire et controversies" <http://ressources-cla.univ-fcomte.fr/gerflint/Espagne2/sayah.pdf>

<sup>5</sup> عبد السلام هارون "البيان والتبيين لعمر بن الجاحظ 1 القاهرة 96/، 97، 99، 100، 101، 102، 103، 104، 105، 106، 107، 108، 109، 110، 111، 112، 113، 114، 115، 116، 117، 118، 119، 120، 121، 122، 123، 124، 125، 126، 127، 128، 129، 130، 131، 132، 133، 134، 135، 136، 137، 138، 139، 140، 141، 142، 143، 144، 145، 146، 147، 148، 149، 150، 151، 152، 153، 154، 155، 156، 157، 158، 159، 160، 161، 162، 163، 164، 165، 166، 167، 168، 169، 170، 171، 172، 173، 174، 175، 176، 177، 178، 179، 180، 181، 182، 183، 184، 185، 186، 187، 188، 189، 190، 191، 192، 193، 194، 195، 196، 197، 198، 199، 200، 201، 202، 203، 204، 205، 206، 207، 208، 209، 210، 211، 212، 213، 214، 215، 216، 217، 218، 219، 220، 221، 222، 223، 224، 225، 226، 227، 228، 229، 230، 231، 232، 233، 234، 235، 236، 237، 238، 239، 240، 241، 242، 243، 244، 245، 246، 247، 248، 249، 250، 251، 252، 253، 254، 255، 256، 257، 258، 259، 260، 261، 262، 263، 264، 265، 266، 267، 268، 269، 270، 271، 272، 273، 274، 275، 276، 277، 278، 279، 280، 281، 282، 283، 284، 285، 286، 287، 288، 289، 290، 291، 292، 293، 294، 295، 296، 297، 298، 299، 300، 301، 302، 303، 304، 305، 306، 307، 308، 309، 310، 311، 312، 313، 314، 315، 316، 317، 318، 319، 320، 321، 322، 323، 324، 325، 326، 327، 328، 329، 330، 331، 332، 333، 334، 335، 336، 337، 338، 339، 340، 341، 342، 343، 344، 345، 346، 347، 348، 349، 350، 351، 352، 353، 354، 355، 356، 357، 358، 359، 360، 361، 362، 363، 364، 365، 366، 367، 368، 369، 370، 371، 372، 373، 374، 375، 376، 377، 378، 379، 380، 381، 382، 383، 384، 385، 386، 387، 388، 389، 390، 391، 392، 393، 394، 395، 396، 397، 398، 399، 400، 401، 402، 403، 404، 405، 406، 407، 408، 409، 410، 411، 412، 413، 414، 415، 416، 417، 418، 419، 420، 421، 422، 423، 424، 425، 426، 427، 428، 429، 430، 431، 432، 433، 434، 435، 436، 437، 438، 439، 440، 441، 442، 443، 444، 445، 446، 447، 448، 449، 450، 451، 452، 453، 454، 455، 456، 457، 458، 459، 460، 461، 462، 463، 464، 465، 466، 467، 468، 469، 470، 471، 472، 473، 474، 475، 476، 477، 478، 479، 480، 481، 482، 483، 484، 485، 486، 487، 488، 489، 490، 491، 492، 493، 494، 495، 496، 497، 498، 499، 500، 501، 502، 503، 504، 505، 506، 507، 508، 509، 510، 511، 512، 513، 514، 515، 516، 517، 518، 519، 520، 521، 522، 523، 524، 525، 526، 527، 528، 529، 530، 531، 532، 533، 534، 535، 536، 537، 538، 539، 540، 541، 542، 543، 544، 545، 546، 547، 548، 549، 550، 551، 552، 553، 554، 555، 556، 557، 558، 559، 560، 561، 562، 563، 564، 565، 566، 567، 568، 569، 570، 571، 572، 573، 574، 575، 576، 577، 578، 579، 580، 581، 582، 583، 584، 585، 586، 587، 588، 589، 590، 591، 592، 593، 594، 595، 596، 597، 598، 599، 600، 601، 602، 603، 604، 605، 606، 607، 608، 609، 610، 611، 612، 613، 614، 615، 616، 617، 618، 619، 620، 621، 622، 623، 624، 625، 626، 627، 628، 629، 630، 631، 632، 633، 634، 635، 636، 637، 638، 639، 640، 641، 642، 643، 644، 645، 646، 647، 648، 649، 650، 651، 652، 653، 654، 655، 656، 657، 658، 659، 660، 661، 662، 663، 664، 665، 666، 667، 668، 669، 670، 671، 672، 673، 674، 675، 676، 677، 678، 679، 680، 681، 682، 683، 684، 685، 686، 687، 688، 689، 690، 691، 692، 693، 694، 695، 696، 697، 698، 699، 700، 701، 702، 703، 704، 705، 706، 707، 708، 709، 710، 711، 712، 713، 714، 715، 716، 717، 718، 719، 720، 721، 722، 723، 724، 725، 726، 727، 728، 729، 730، 731، 732، 733، 734، 735، 736، 737، 738، 739، 740، 741، 742، 743، 744، 745، 746، 747، 748، 749، 750، 751، 752، 753، 754، 755، 756، 757، 758، 759، 760، 761، 762، 763، 764، 765، 766، 767، 768، 769، 770، 771، 772، 773، 774، 775، 776، 777، 778، 779، 780، 781، 782، 783، 784، 785، 786، 787، 788، 789، 790، 791، 792، 793، 794، 795، 796، 797، 798، 799، 800، 801، 802، 803، 804، 805، 806، 807، 808، 809، 810، 811، 812، 813، 814، 815، 816، 817، 818، 819، 820، 821، 822، 823، 824، 825، 826، 827، 828، 829، 830، 831، 832، 833، 834، 835، 836، 837، 838، 839، 840، 841، 842، 843، 844، 845، 846، 847، 848، 849، 850، 851، 852، 853، 854، 855، 856، 857، 858، 859، 860، 861، 862، 863، 864، 865، 866، 867، 868، 869، 870، 871، 872، 873، 874، 875، 876، 877، 878، 879، 880، 881، 882، 883، 884، 885، 886، 887، 888، 889، 890، 891، 892، 893، 894، 895، 896، 897، 898، 899، 900، 901، 902، 903، 904، 905، 906، 907، 908، 909، 910، 911، 912، 913، 914، 915، 916، 917، 918، 919، 920، 921، 922، 923، 924، 925، 926، 927، 928، 929، 930، 931، 932، 933، 934، 935، 936، 937، 938، 939، 940، 941، 942، 943، 944، 945، 946، 947، 948، 949، 950، 951، 952، 953، 954، 955، 956، 957، 958، 959، 960، 961، 962، 963، 964، 965، 966، 967، 968، 969، 970، 971، 972، 973، 974، 975، 976، 977، 978، 979، 980، 981، 982، 983، 984، 985، 986، 987، 988، 989، 990، 991، 992، 993، 994، 995، 996، 997، 998، 999، 1000

Էմիրությունների բարբառներում նույնպես առկա են այլ լեզուների ազդեցությունները, փոխառությունները մասնավորապես՝ անգլերենի, թուրքերենի, ֆրանսերենի, իսպաներենի և իտալերենի:

ԱՄԷ բարբառների ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել նաև հին արաբական ցեղախմբեր, որոնք Արաբական թերակղզուց քոչել են Էմիրություններ, դրանցից են ալ Ազդ ցեղախումբը, որն իր ազդեցությունն է թողել երկրի արևելյան ծովափնյա շրջանների, Ռաս ալ Խեյմայի և Դաբայի լեռնային շրջանների և Ֆուջեյրիայի, Քալբայի լեռնային շրջանների բարբառների ձևավորման վրա: Իսկ Աբդ ալ Կեյս և Թամիմ ցեղախմբերի բարբառների ազդեցությունը նկատվում է Էմիրությունների արևմտյան առափնյա շրջաններում, Կատարում և Բահրեյնում<sup>6</sup>:

Էմիրաթական բարբառների շարքում առանձնահատուկ են ալՇուհուհ, ալ Աուամիր և ալ Չուհուրին ցեղերի բարբառները, որոնք միանգամայն տարբերվում են էմիրաթական մյուս բարբառներից:

**Ալ Շուհուհ ցեղի բարբառը** (لهجة الشحوح) արաբական հին բարբառներից է, այս բարբառում օգտագործվում են այնպիսի բառեր և տերմիններ, որոնք չեն հանդիպում ոչ մի այլ արաբական բարբառում: Այս բարբառով են խոսում լեռնային բարձրադիր շրջաններում բնակվող ալ Շուհուհ, ալ Չուհուրին, ալ Հարուս, Բնի Շմեյի և ալ Քամալիին ցեղերը Ռաս ալ Խեյմայում, Դաբայում, Խասարում և մոտակա շրջաններում: Այս բարբառին բնորոշ է ստորոգյալը դնել ենթակայից հետո, բառերի մեծ մասում "Դադ" հարֆը փոխարինվում է "ուսու" հարֆով: Ինչպես օրինակ՝ /مرض- مرو، /رمض-رمو/՝ /زعلان لا/ مشي لا , ժխտական մասնիկը դրվում է բայի վերջում, ոչ թե սկզբում, օրինակ՝

**Ալ Աուամիր ցեղի բարբառը** (لهجة العوامر) նույնպես համարվում է էմիրաթական հնագույն բարբառներից մեկը, այն նման է արաբական թերակղզու հնագույն ցեղախմբերի բարբառներին: Հայտնի է, որ Աուամիր ցեղախմբի ներկայացուցիչները բեդվիններ են եղել, ապրել են անապատներում, զբաղվել ուղտաբուծությամբ, ինչի շնորհիվ էլ այս բարբառում կան առանձնահատուկ բառեր, որոնք վերաբերում են ուղտին, նրա կենցաղին, մարմնի մասերին: Աուամիր ցեղերը այսօր ապրում են Էմիրությունների արևմտյան շրջաններում, Աբու Դաբիում, ալ Աինում, ինչպես նաև Եմենում և Օմանում: Աուամիրները հյուրընկալ ցեղախումբ են համարվում, ուստի նրանց բարբառում մեծ թիվ են կազմում ողջույնի և հյուրընկալության արտահայտությունները, ինչպես օրինակ՝ /مرحبا ومسهيلا، حي بالركاب وهلهما، هود وهدى، المرهب باقي، الله يرحبك على فضله/ .

<sup>6</sup> عبد العزيز عبد الرحمن المسلم " اللهجة الإماراتية", الشارقة، 2001

<sup>7</sup> أحمد محمد عبيد "اللهجات الإمارات"، الشارقة، 2006

**Ալ Չուհուրին ցեղի բարբառը** (لهجة الظهورين أو اللهجة الظهيرية): Ալ Չուհուրին ցեղախումբը մաքուր արաբական ցեղախմբերից է, այժմ տարածված է Օմանի հատկապես լեռնային շրջաններում և Էմիրությունների Դաբա քաղաքում և Ռաս ալ Խեյմայում: Չուհուրիների բարբառը հատակորեն տարբերվում է տարածաշրջանում տարածված մնացած բարբառներից, սակայն հարկ է նշել, որ չնայած այս բարբառը բարդ է, այնուամենայնիվ իր ծագմամբ մոտ է գրական արաբերենին: Այս բարբառին բնորոշ են բառերի որոշ հարֆերի հնչյունափոխումը, երկարացումը, կրճատումը, շարադասության փոփոխությունը: Որոշակի ընդհանրություններ ունի ալ Շուհուհ ցեղի բարբառին:

ԱՄԷ-ում բարբառները դասակարգվում են ըստ այն տարածաշրջանի, որտեղ տարածված են: Ըստ այս դասակարգման՝ բարբառները բաժանվում են ներքոնշյալ խմբերի և ենթախմբերի<sup>8</sup>:

❖ ԱՄԷ քաղաքային բարբառ

- Արևմտյան առափնյա շրջանների քաղաքային բարբառ, որն ամենատարածվածն է Էմիրություններում և բաղկացած է հետևյալ ենթաբարբառներից
  - Աբու Դաբիի «Վաբյանիա» բարբառը
  - Դուբայի, Շարժայի, Աջմանի, Ալ Համրիայի քաղաքների բարբառ, որոնք միմյանցից գրեթե չեն տարբերվում և ժամանակի ընթացքում ավելի են նմանվում:
  - Բուվեյնիա բարբառ, որը տարածված է Ռամ ալ-Բուվեյն քաղաքում:
  - Ռաս ալ Խեյմայի քաղաքային բարբառ
  - Արևմտյան շրջանների քաղաքային բարբառ, որը Աբու Դաբիի քաղաքային բարբառի և արևմտյան բեդվինական շրջանների բարբառի խառնուրդն է<sup>9</sup>:
- Արևելյան առափնյա շրջանների բարբառ, որը նման է Օմանի բարբառին և բաղկացած է հետևյալ ենթաբարբառներից՝
  - Բալբայի և հարևան շրջանների բարբառ
  - Ֆուջեյրայի և հարակից շրջանների քաղաքային բարբառ
  - Խուրֆաքանի և հարակից շրջանների բարբառ
  - Դադնայի և հարակից շրջանների բարբառ
  - Դաբայի և հարակից շրջանների բարբառ

❖ ԱՄԷ բեդվինական բարբառ

- Հյուսիսային շրջանների բեդվինական բարբառ
- Աբու Դաբիի բեդվինական շրջանների բարբառ

<sup>8</sup> عبد العزيز عبد الرحمن المسلم " اللهجة الإماراتية"، المشاركة، 2001

<sup>9</sup> جنستون، ت.م، "دراسات في لهجات شرقي الجزيرة العربية"، ترجمة د. أحمد الضبيبي، بيروت، 1983

- Ալ Աինի բեդվինական բարբառ
- Աբու Դաբիի արևմտյան շրջանների բեդվինական բարբառ
  - ❖ ԱՄԷ լեռնային շրջանների բարբառ
- Ռասա ալ Խեյմայի լեռնային բարբառ, որի մեջ չի մտնում ալ Շուհուհի ցեղի բարբառը
- Արևելյան լեռնային շրջանների բարբառ
- Ալ Շուհուհի ցեղախմբի բարբառ, որը միանգամայն տարբերվում է նախորդիվ նշված բոլոր բարբառներից<sup>10</sup>:

Հատկանշական է, որ արաբական ժամանակակից բարբառները պարզեցրել են քերականական և շարահյուսական որոշ կանոններ: Ժամանակակից էմիրաթի լեզվաբաններից Ահմադ Մուհամմադ Օբեյդին իր «Էմիրությունների բարբառները» աշխատության մեջ մանրամասն նկարագրել է ԱՄԷ բարբառների քերականական, շարահյուսական և հնչյունաբանական առանձնահատկությունները: Այսպես անդրադառնանք Էմիրությունների բարբառներին բնորոշ մի շարք երևույթների՝

- Հարցական դերանուններից՝

- Ինչ / ماذا / ما արտասանվում է (مو)՝ արևելյան առափնյա բարբառներում, (مب)՝ Էմիրությունների բարբառում, (وشن)՝ Աբու Դաբիի բարբառում, (أما)՝ Դադնայի բարբառում և Դաբայի արևմտյան լեռնային շրջաններում, (هما)՝ ալ Շուհուհի և ալ Չուհուրիին բարբառներում:
- Ինչու՞ لماذا-ն արտասանվում է հիմնականում (ليش), իսկ արևելյան շրջաններում (لوش) կամ (كيه)
- Որտե՞ղ أين-ն արտասանվում է (وين)
- Ինչպես كيف-ն արտասանվում է (كيف), իսկ արևելյան շրջաններում՝ (كما كيه)

- Ցուցական դերանուններից՝

- Սա (ար. .) هذا-ն արտասանվում է هاده
- Սա (իզ. .) هذه-ն արտասանվում է هانیه կամ هانيك
- Դա (ար. .) ذلك-ն արտասանվում է اكوه կամ اهكوه
- Դա (իզ. .) تلك-ն արտասանվում է هانكیه
- Սրանք أولئك-ն արտասանվում է اكوهم կամ هانكوه կամ هانكوه
- Դրանք هؤلاء-ն արտասանվում է هانهم<sup>11</sup>

- Անձնական դերանուններից

- Դու (ար. .) أنت-ն արտասանվում է انت կամ انتت
- Դու (իզ. .) أنت-ն արտասանվում է انتي կամ انتت

<sup>10</sup> عبد العزيز عبد الرحمن المسلم " اللهجة الإماراتية"، المشاركة، 2001

<sup>11</sup> د. فالح حنظل "معجم الألفاظ العامية في دولة الإمارات"، أبو ظبي، 1998

- Մենք نحن-ն արտասանվում է (نحن) կամ (إحنا)
- Դուք (ար. և իզ.) أنتن / أنتم երկուսն էլ արտասանվում է (انتم)
- Նա (ար.) هو -ն արտասանվում է (هوه)
- Նա (իզ.) هي -ն արտասանվում է (هيه)
- Իսկ երկակի թվի նրանք երկուսով هُما -ն ընդհանրապես չի կիրառվում<sup>12</sup>:
  - Հնչյունաբանական որոշակի տարբերություններ կան նաև բայերի անցյալ և ներկա ժամանակների խոնարհումների մեջ: Վերցնենք شرب /խմել բայը և այս բայի խոնարհումով ցույց տանք այդ տարբերությունները:

Անցյալ ժամանակում՝

- Իսմեցի- شَرِبْتُ -ն դառնում է شَرَبْتُ
- Իսմեցի (ար.)- شَرِبْتُ -ն դառնում է شَرَبْتُ
- Իսմեցի (իզ.) - شَرِبْتُ -ն դառնում է شَرَبْتُ
- Իսմեց (ար.)- شَرَبْتُ -ն դառնում է شَرِبْتُ
- Իսմեց (իզ.)- شَرِبْتُ -ն դառնում է شَرَبْتُ
- Իսմեցինք شَرِبْنَا -ն դառնում է شَرَبْنَا
- Իսմեցիք (ար., իզ.)- شَرِبْتُمْ , սակայն Աբու Դաբիի և բեդվինական բարբառներում կա առանձին դուք աղջիկներդ խմեցիք ձև, որն է شَرِبْتُنَّ
- Իսմեցին (ար. իզ.)- شَرِبْتُمْ -ն դառնում է شَرَبْتُمْ , իսկ Աբու Դաբիի և բեդվինական բարբառներում կա նաև իզական ձևը شَرِبْتُمْ

Ներկա ժամանակում՝

- Իսմում են أَشْرَبُ -ն դառնում է أَشْرَبُ
- Իսմում ես تَشْرَبُ -ն դառնում է تَشْرَبُ
- Իսմում է (ար.) يَشْرَبُ -ն դառնում է يَشْرَبُ
- Իսմում է (իզ.) تَشْرَبُ -ն դառնում է تَشْرَبُ
- Իսմում ենք نَشْرَبُ -ն դառնում է نَشْرَبُ
- Իսմում եք (ար.) تَشْرَبُونَ -ն դառնում է تَشْرَبُوا կամ تَشْرَبُونَ
- Իսմում են (ար.) يَشْرَبُونَ -ն դառնում է يَشْرَبُوا կամ يَشْرَبُونَ
- Իսմում են (իզ.) يَشْرَبْنَ -ն դառնում է يَشْرَبْنَ կամ يَشْرَبْنَ

Բարբառների առանձնահատկություններն ուսումնասիրելիս հնարավոր չէ չսանդրադառնալ հնչյունաբանությանը: Էմիրաթական բարբառներին բնորոշ է الإبدال երևույթը, երբ բառի մեջ մեկ հարֆը փոփոխվում է մեկ այլ հարֆով: Լեզվաբանական այս առանձնահատկության վերաբերյալ ծավալուն ուսումնասիրություն է կատարել Էմիրաթի ուսումնասիրող Ահմադ Մուհամմադ Օբաիդն իր

<sup>12</sup> أحمد محمد عبيد "اللهجات الإمارات"، الشارقة، 2006، 43-43

"ظاهرة الإبدال في لهجات الإمارات العربية المتحدة" աշխատության մեջ: Էմիրությունների առափնյա արևելյան և արևմտյան շրջանների բարբառներում հանդիպում ենք հետևյալ հարֆերի փոփոխությունները բառերի մեջ՝

- الكاف- հարֆը փոխվում է և արտասանվում «գ» կամ «յ», այս երևույթը հանդիպում է նաև Ծոցի այլ բարբառներում և կոչվում է «քաշքաշա»: Օրինակ՝ ِ عليك-ն արտասանվում է «ալեյք», سَمَك արտասանվում է «սամազ»
- العين-հարֆը փոխվում է أَلْف օրինակ عَلِي արտասանվում է أَلِي, այս երևույթը հանդիպում է հասկապես Ալ Շուհուհների և ալ Չուհուրիների բարբառներում:
- الألف- հարֆը արտասանվում է عَيْن, օրինակ قَرَعَان փոխարեն արտասանվի قَرَان, կամ عَرَب փոխանակ լինի أَرَب: Այս երևույթը հիմնականում հանդիպում է մեծահասակների մոտ՝ անկախ տարածքային տարանջատման:
- الظاء հարֆը արտասանվում է ضَاء, օրինակ ضُهُر է արտասանվում ظُهُر -ը: Այս երևույթը տարածված է արևելյան շրջանների բարբառներում:
- الشارقة- ھարֆը արտասանվում է جِيم, օրինակ الشارقة է արտասանվում جِيم -ի փոխարեն: Այս երևույթը տարածված է արևմտյան առափնյա շրջաններում:
- القاف հարֆը արտասանվում է «q», օրինակ أَقُول բառը արտասանվում է «ագուլ»: Հիմնականում հանդիպում է արևմտյան առափնյա շրջանների բարբառներում<sup>13</sup>:
- الذال հարֆը արտասանվում է ضَاد, օրինակ ذَكَر `ضَكَر փոխարեն:
- الجيم-ը արտասանվում է يَاء, օրինակ شَجْرَة `شَيْرَه փոխարեն:
- الألف հարֆը արտասանվում է وَاو, օրինակ وَكَد փոխանակ լինի أَكَد:
- ثلاثه փոխվում է تَاء-ի, օրինակ ثلاثه փոխանակ լինի ثَلَاثَة:
- الهاء հարֆը փոխվում է هَاء-ի, օրինակ هَنْتَيْن փոխարեն:
- الهاء հարֆը փոխվում է طَاء-ի արևելյան շրջանների բարբառներում, ինչպես նաև Ալ Շուհուհ ցեղախմբի բարբառում: օրինակ عَشْر փոխարեն ասում են أَطْهَر
- الشين-ը փոխակերպվում է هَاء-ի արևելյան շրջանների և բեդվինական բարբառներում, օրինակ رَاشِد-ին ասում են رَاهِد, իսկ عَشْر-ի փոխարեն ասում են عَهْر:
- الضاد-ը փոխարինում են غَيْن-ով, օրինակ بَيْض-ի փոխարեն ասում են بَيْغ , այս երևույթը տարածված է ալ Չուհուրիների բարբառում:
- الضاد-ը փոխարինում են وَاو-ով, օրինակ أَيُّض-ի փոխարեն ասում են بَيُّو

<sup>13</sup> أحمد محمد عبيد "ظاهرة الإبدال في لهجات الإمارات العربية المتحدة", أبو ظبي، 2013

- النباء-ն արտասանվում է حاء, օրինակ` هناك ասելու փոխարեն այ Չուհուրիներն ու Ալ Շուհուհներն ասում են هناك<sup>14</sup>:
- النون-ը որոշ դեպքերում Ալ Չուհուրիների մոտ փոխվում է إياء-ի, ինչպես օրինակ إيسان-ի փոխարեն ասում են إيسان<sup>15</sup>:
- السنين-ը այ Չուհուրիները և այ Շուհուհները արտասանում են شين, օրինակ شمس-ի փոխարեն ասում են شمش:
- القاف-ի փոխարեն արևմտյան առափնյա բարբառներում արտասանում են عين, օրինակ قوف-ի փոխարեն, ասում են غول:
- الذال-ը արևելյան առափնյա շրջաններում արտասանում են ظاء, օրինակ أظكر-ի փոխարեն ասում են أظكر:
- التاء հարֆը որոշ բառերում արտասանվում է فاء, օրինակ تلج-ի փոխարեն ասում են فجع:

Լեզվական իրավիճակի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև օտար լեզուների գործառնության հանգամանքը, որոնց տարածվածության աստիճանը պայմանավորված է երկրի վերապրած պատմական ժամանակաշրջանից, այն աշխարհագրական և սոցիալ-մշակութային տարածաշրջանից, որում գտնվում է երկիրը, նախկին մետրոպոլիայի հետ ունեցած հարաբերությունների բնույթից, համաշխարհային հարաբերությունների համակարգում նրա ընդգրկվածությունից: Օտար լեզուների տարածումը կապված է նաև հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի հետ<sup>16</sup>:

Առանձնակի կարևորություն ունի «պաշտոնական» արաբերեն լեզվի սահմանումը: Արաբական երկրների գրեթե բոլոր սահմանադրությունները հայտարարում են, երկրի «պաշտոնական լեզուն արաբերենն է<sup>17</sup>: Իրականությունն այնուամենայնիվ ցույց է տալիս, որ այդ հասկացությունը գործառական առումով նույնքան բազմազան է, որքան և արաբական երկրները, և որոշ վերապահումներով կարելի և ասել, որ լեզվաբանական ռեսուրսների և չափորոշիչների առումով այնքան պաշտոնական արաբերեն լեզուներ կան, որքան կան արաբական երկրներ:

Էմիրությունների բարբառներն ուսումնասիրելիս ակնհայտ երևում է այլ լեզուների ազդեցությունը, հատկապես օտարալեզու փոխառությունների առումով: Էմիրությունների ժամանակակից բարբառները կրել են աֆրիկյան, եվրոպական և ասիական լեզուների (պարսկերեն, ուրդու, անգլերեն, պորտուգալերեն, ինչպես նաև

<sup>14</sup> Ṣūnīn տեղում:

<sup>15</sup> أحمد محمد عبيد "ظاهرة الإبدال في لهجات الإمارات العربية المتحدة"، أبوظبي، 2013

<sup>16</sup> Шагалъ В., Языковой аспект национальных процессов в арабских странах. М., 1987.

<sup>17</sup> Հակոբյան Մ., «Սոցիոլեզվաբանական իրադրությունը Թունիսում. Երկրաբառնաբանության և երկրլեզվության դրսևորման առանձնահատկությունները», Երևան 2007, էջ 23, 25 :



քուվեյթյան, իրաքյան, եգիպտական բարբառներ) ազդեցությունը: ԱՄԷ-ն, լինելով բաց գլոբալիզացիայի առաջ, հեշտորեն ինտեգրվում է ժամանակակից տեխնոլոգիական ձեռքբերումներին և մասնակիցն է դառնում տեխնոլոգիական հեղափոխությանը: Այս նկրտումների հետևանքով էլ էմիրաթական բարբառները ենթարկվում են լեզվական փոխազդեցությունների: Այս առումով, հատկապես հարկ է նշել 1971թ. Էմիրությունների հիմնադրումից հետո սկսված աննախադեպ տնտեսական ներգաղթը Ասիական երկրներից, ինչով հիմք դրվեց հասարակական, մշակութային և լեզվական նոր դարաշրջանի:

Էմիրությունների բարբառում մեծ թիվ են կազմում հնկերենից և ուրդուից փոխառությունները, ինչպես ներկայացված է աղյուսակում<sup>18</sup>:

Հնդկերեն/ուրդու	Թարգմանությունը	Նշանակությունը արաբերենով	Փոխառություն
اچار	թթու	مخل	اچار
برياني	Պոպեղով, բրնձով ուտեստ	رز يطبخ مع الفف	برياني
بلام	նիզակ	رمح	بلام
بانخة	Օդորակիչ, հովհար	مروحة	بنخة
بادم	նուշ	لوز	بيدام
جام	ապակի	زجاج	جام
جوتي	կոշիկ	حذاء	جوتي
سيده	ուղիղ	مستقيم	سيده
بندنه	փակել	يغلق	بند

Հատկանշական է, որ հնդկերենից եկած փոխառությունների մեծ մասը ուտեստների, մթերքների և խոհանոցի հետ կապված բառեր են: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ էմիրաթցիների խոհարարների մեծ մասը հնդիկներ են, կան նաև հնդկական բազմաթիվ ռեստորաններ, իսկ հնդկական խոհանոցը էմիրաթցիների ամենասիրելի խոհանոցն է:

Վերջին տասնամյակներում տնտեսության, տեխնոլոգիաների, տուրիզմի զարգացմանը զուգահեռ, լայն կիրառություն ստացավ անգլերենը, ինչի հետևանքով էմիրաթական բարբառներ մտան բազմաթիվ փոխառություններ անգլերենից<sup>19</sup>, ինչպես օրինակ՝

Անգլերեն	Թարգմանությունը	Նշանակությունը արաբերենով	Փոխառություն
areal	տարածքային	مساحي	اريل

<sup>18</sup> علي عبد العزيز الشرحان "تحولات اللغة الدارجة" التأثير الاجتماعي على العربية في الإمارات" الشارقة، 1990

<sup>19</sup> علي عبد العزيز الشرحان "تحولات اللغة الدارجة" التأثير الاجتماعي على العربية في الإمارات" الشارقة، 1990

absent	բացակա	غائب	ابسن
engineer	ինժեներ	مهندس	انجنير
air conditioning	օդորակիչ	تكييف	كنديشن
battery	մարտկոց	بطارية	بتري
bus	ավտոբուս	حافلة	بس
packet	փաթեթ	حزمة	باكيت
break	ընդմիջում	استراحة	بريك
biscuit	թխվածքաբլիթ	بسكويت	بسكوت
plastic	պլաստիկ	بلاستيك	بلاستيك
garage	ավտոտնակ	موقف	گراج
glass	բաժակ	كأس	گلاص
driver	վարորդ	سائق	دریول
switch	անջատիչ	مفتاح كهربائي	سیوح
frame	շրջանակ	إطار	فريم
card	այգեքարտ	بطاقة	كارت
light	լույս	ضوء	لبيت
lamp	լամպ	مصباح	لميه
list	ցուցակ	قائمة	لسته
license	լիցենզիա	رخصة	ليسن
hall	դահլիճ	صالة	هول
finish	ավարտել	انتهى	فنتش
tractor	տրակտոր	جرار	تراكتور
oil	ձեթ	زيت	ايل

Ուսումնասիրելով անգլերենից եկած փոխառությունները՝ պարզ երևում է, որ այս փոխառությունների մեծ մասը կապված է տեխնիկական բառապաշարի հետ: Էմիրաթական բարբառներում կան նաև փոխառություններ պարսկերենից և թուրքերենից, բայց դրանց մեծ մասը հանդիպում է ավելի ավագ սերնդի բառապաշարում, երիտասարդները դրանք փոխարինել են անգլերեն փոխառություններով:

Այսպիսով, ինչպես արաբական բոլոր բարբառները, այնպես էլ էմիրաթական բարբառները ձևավորվել են հին ցեղախմբերի խոսվածքների վրա, կրել են հարևան երկրների և եվրոպական լեզուների ազդեցությունը, իսկ տեխնոլոգիաների արագ զարգացումը հանգեցրել է նոր տերմինների առաջացմանը և լայն տարածմանը: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ Արաբական Միացյալ Էմիրություններում տեխնոլոգիական արագ զարգացմանը զուգընթաց կարևորվում է արաբերենի պահպանումը և խրախուսումը: ԱՄԷ բարբառը համարվում է արաբական մյուս երկրներից էմիրաթցիների առանձնացման բնորոշիչներից մեկը:

**DIALECTS OF THE UNITED ARAB EMIRATES**

*Hasmik Yeritsyan*

(Summary)

The dialect of the United Arab Emirates is classified as one of the dialects of the Gulf countries despite the differences. Geographically, the UAE consists of coastal areas, mountains and deserts. The differences in these geographical and climatic conditions probably led to the separation of the dialects of the locals. Arab tribes have lived here since ancient times and each tribe had its own dialect. The dialects of the ancient Arab tribes played a great role in the formation of modern Arabic dialects. Thus, it is apparent that both the Arabic dialects and the Emirati dialects were formed on the basis of the dialects of the old tribes and were influenced by the European languages of the neighboring countries, meantime the rapid development of technology led to the emergence of new terms and the widespread use of them. It is noteworthy that with the rapid development of technology, the Arabic language is preserved and promoted in the United Arab Emirates. The UAE dialect is considered to be one of the defining characteristics of the Emirati people among other Arab countries.

## **ДИАЛЕКТЫ ОБЪЕДИНЕННЫХ АРАБСКИХ ЭМИРАТОВ**

*Асмик Ерицян*

**(Резюме)**

Диалект Объединенных Арабских Эмиратов классифицируется как один из диалектов стран Персидского залива, несмотря на их различия. Географически ОАЭ состоит из прибрежных территорий, гор и пустынь. Разница в этих географических и климатических условиях, вероятно, привела к разделению диалектов местных жителей. С давних времен здесь жили арабские племена, каждое из которых имело свой диалект. Диалекты древних арабских племен сыграли большую роль в формировании современных арабских диалектов. Таким образом, становится ясно, что и арабские диалекты, и диалекты Эмиратов сформировались на диалектах старых племен, испытали влияние европейских языков соседних стран, а быстрое развитие технологий привело к появлению новых терминов и широкое их использование. Примечательно, однако, что в Объединенных Арабских Эмиратах с быстрым развитием технологий используется сохранение и популяризация арабского языка. Диалект ОАЭ считается одной из отличительных черт эмиратцев из других арабских стран.